12 դեկտեմբերի 2019 թվականի N 1829 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 462-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1225-Ն որոշման պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի՝ «Ներդրումային ծրագրի շրջանակներում «ԷՅ ԲԻ ՍԻ ՏԵՔՍՏԻԼ» սահմանափակ պատաս-խանատվությամբ ընկերության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 462-Ա որոշման հավելվածի ցանկում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածը 12-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13-36-րդ կետերով՝

«13.	3403	Փափկացնող նյութ տեքստիլի մշակման համար	կգ	20 000	19 206 000
14.	3402	Մակերևութաակտիվ օրգանական նյութեր՝ բաժնեծրարված կամ չբաժնեծրարված մանրածախ վաճառքի համար՝ ԱՅԼ	կգ	28 000	17 552 000
15.	2918	Կիտրոնաթթու	կգ	125 000	67 375 000
16.	3402	ԱՅԼ մակերևութաակտիվ նյութեր	կգ	24 000	15 365 000
17.	2915	Քացախաթթու	կգ	104 000	32 181 000
18.	2847	Ջրածնի պերօքսիդ	կգ	200 000	34 144 000
19.	2833	Դինատրիումի սուլֆատ	կգ	1 500 000	208 065 000
20.	2836	Դինատրիումի կարբոնատ	կգ	520 000	95 016 000
21.	2815	Նատրիումի հիդրօքսիդ պինդ վիճակում	կգ	120 000	34 251 000
22.	2831	Նատրիումի երկթիոնիտ	կգ	100 000	34 677 000
23.	2501	Աղ՝ արդյունաբերական նպատակների համար	կգ	140 000	17 365 000
24.	2807	Ծծմբաթթու	կգ	144 000	26 120 000
25.	3906	Ակրիլային պոլիմեր՝ պոլի [N-(3-հիդրօքսիիմինո-1,1-դիմեթիլբութիլ)ակրիլամիդ]	կգ	125 000	131 688 000
26.	3824	Դիրտի առաջացումն արգելակող նյութ	կգ	4 000	3 200 000

27.	3507	Հակաօքսիդիչ ֆերմենտ	կգ	250 000	183 750 000
28.	3404	Մոմանյութ	կգ	4000	4 110 000
29.	5807	Պիտակ՝ գործած մակագրություններով	կգ	15 000	70 000 000
30.	5807	Պիտակներ՝ այլ	կգ	15 000	70 000 000
31.	5308	Մանվածք այլ բուսական մանածագործական մանրաթելերից՝ հնդկեղեգի մանվածք	կգ	1 200 000	3 000 000 000
32.	5510	Մանվածք արհեստական մանրաթելերից (բացի կարի թելերից)՝ մանրածախ վաճառքի համար չբաժնեծրարած - միաթել մանվածք	կգ	1 200 000	3 000 000 000
33.	5510	Մանվածք արհեստական մանրաթելերից (բացի կարի թելերից)՝ մանրածախ վաճառքի համար չբաժնեծրարած - բազմաթել մանվածք	կգ	1 200 000	3 000 000 000
34.	4819	Ստվարաթղթե արկղեր	կգ	250 000	367 500 000
35.	3923	Պոլիմերային /ՊՎՔ/ պայուսակներ փաթեթավորման համար	կգ	50 000	61 250 000
36.	3923	Այլ պոլիմերային թաղանթ՝ փաթեթավորման համար	կգ	50 000	61 250 000».

2) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «8 146 459 000» թիվը փոխարինել «18 700 524 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ